ArmLur.am

ISSN 1829-2763

ՕՐԱԹԵՐԹ ԲՈԼՈՐԻ ԵՎ ԱՄԵՆ ԻՆՉԻ ՄԱՍԻՆ

Ժողովուրդ

19 հունվարի ուրբաթ 2024
տպագրության ԺԳ տարի

4
(2854)

100 դրամ

քաղ. Երեւան, Աբովյան 22ա/3 (0010) + 374 10 546423 info.armlur@gmail.com, info.zhoghovurd@gmail.com

ԿՈՆՋՈՐՅԱՆԻ ՈՒՇԱԳՐԱՎ ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆԸ. ՓԱՍՏԱԹՈՒՂԹ



Заявление
Президента Азербайджанской Республики,
Премьер-министра Республики Армения
и Президента Российской Федерации

Мы, Президент Азербайджанской Республики И.Г.Алиев, Премьер-министр Республики Армения Н.В.Пашинян и Президент Российской Федерации В.В.Путин, заявили о следующем:

1. Объявляется о полном прекращении огня и всех военных действий в зоне нагорно-карабахского конфликта с 00 часов 00 минут по московскому времени 10 ноября 2020 года. Азербайджанская Республика и Республика Армения, далее именуемые Сторонами, останавливаются на занимаемых ими позициях.

2. Агдамский район возвращается Азербайджанской Республике до 20 ноября 2020 года.

3. Вдоль линии соприкосновения в Нагорном Карабахе и вдоль Лачинского коридора развертывается миротворческий контингент Российской Федерации в количестве 1960 военнослужащих со стрелковым оружием, 90 бронетранспортеров, 380 единиц автомобильной и специальной техники.

4. Миротворческий контингент Российской Федерации развертывается параллельно с выводом армянских вооруженных сил. Срок пребывания миротворческого контингента Российской Федерации – 5 лет с автоматическим продлением на очередные 5-летние периоды, если ни одна из Сторон не заявит за 6 месяцев до истечения срока о намерении прекратить применение данного положения.

5. В целях повышения эффективности контроля за выполнением Сторонами конфликта договоренностей развертывается миротворческий центр по контролю за прекращением огня.

6. Республика Армения до 15 ноября 2020 года возвращает Азербайджанской Республике Кельбаджарский район, а до 1 декабря 2020 года – Лачинский район. Лачинский коридор (шириной 5 км), который будет обеспечивать связь Нагорного Карабаха с Арменией и при этом не

2

будет затрагивать г.Шушу, остается под контролем миротворческого контингента Российской Федерации.

По согласованию Сторон в ближайшие три года будет определен план строительства нового маршрута движения по Лачинскому коридору, обеспечивающий связь между Нагорным Карабахом и Арменией, с последующей передислокацией российского миротворческого контингента для охраны этого маршрута.

Азербайджанская Республика гарантирует безопасность движения по Лачинскому коридору граждан, транспортных средств и грузов в обоих направлениях.

7. Внутренне перемещенные лица и беженцы возвращаются на территорию Нагорного Карабаха и прилегающие районы под контролем Управления Верховного Комиссара ООН по делам беженцев.

8. Производится обмен военнопленными, заложниками и другими удерживаемыми лицами и телами погибших.

9. Разблокируются все экономические и транспортные связи в регионе. Республика Армения гарантирует безопасность транспортного сообщения между западными районами Азербайджанской Республики и Нахичеванской Автономной Республикой с целью организации беспрепятственного движения граждан, транспортных средств и грузов в обоих направлениях. Контроль за транспортным сообщением осуществляют органы Пограничной службы ФСБ России.

По согласованию Сторон будет обеспечено строительство новых транспортных коммуникаций, связывающих Нахичеванскую Автономную Республику с западными районами Азербайджана.

« 9 » ноября 2020 года

Президент Азербайджанской Республики — Премьер-министр Республики Армения — Президент Российской Федерации

ԱԺ ՔՊ խմբակցության ղեկավար Հայկ Կոնջորյանը երեկ ֆեյսբուքյան իր էջում գրել է. «Անընդհատ փնտրում եւ այդպես էլ չեմ գտնում, թե որտեղ է գրված, որ Հայաստանի տարածքում որեւէ այլ պետություն պետք է ապահովի կոմունիկացիայի անվտանգություն»: Ամենայն հավանականությամբ, այս գրառումը նա արել է այն բանից հետո, երբ ՌԴ ԱԳ նախարար Սերգեյ Լավրովն իր ասուլիսում ասել էր. «Երեւանը նոր պահանջներ է ներկայացնում, չի ուզում, որ այնտեղ կանգնեն ռուս սահմանապահները: Դա հակասում է պայմանավորվածություններին»: Թերեւս հուշենք Հայկ Կոնջորյանին ընթերցել կամ վերընթերցել 2020թ. նոյեմբերի 9-ի եռակողմ հայտարարության տեքստը, որի տակ դրված է իր այժմյան կուսակցության ղեկավարի եւ վարչապետի՝ Նիկոլ Փաշինյանի ստորագրությունը: Իսկ այդ հայտարարության 9-րդ կետում գրված է. «Ապաշրջափակվում են տարածաշրջանում բոլոր տնտեսական եւ տրանսպորտային կապերը: Հայաստանի Հանրապետությունը երաշխավորում է Ադրբեջանի Հանրապետության արեւմտյան շրջանների եւ Նախիջեւանի Ինքնավար Հանրապետության միջեւ տրանսպորտային հաղորդակցության անվտանգությունը՝ քաղաքացիների, տրանսպորտային միջոցների եւ բեռների՝ երկու ուղղություններով անխոչընդոտ տեղաշարժը կազմակերպելու նպատակով: Տրանսպորտային հաղորդակցության նկատմամբ վերահսկողությունն իրականացնում են Ռուսաստանի ԱԴԾ սահմանապահ ծառայության մարմինները»: Հետաքրքիր է՝ մի՞թե Կոնջորյանը չի տեսնում այս պարզ նախադասությունը. «Տրանսպորտային հաղորդակցության նկատմամբ վերահսկողությունն իրականացնում են Ռուսաստանի ԱԴԾ սահմանապահ ծառայության մարմինները»: Գուցե չի ուզում տեսնել: Այս իշխանություններն անգամ հակադարձելու կամ քննադատելու հարցում են ապաշնորհ ու մանիպուլյատոր, ուր մնաց՝ նրանցից պետության կառավարում ակնկալես:

Վերջին շրջանում «Ժողովուրդ» օրաթերթը պարբերաբար հրապարակում է նախորդ տարի հուլիսի 31-ին տեղի ունեցած՝ «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության դրամահավաքի մանրամասները: Ինչպես հայտնի է, Հայաստանի բոլոր խոշոր գործարարներին «հանձնարարված է» եղել կլորիկ գումարներ հանգանակել իշխանական կուսակցությանը. ՔՊ-ի դրամահավաք-երեկոյին 996 նվիրատուների հանգանակությունների արդյունքում հավաքվել է շուրջ 509 085 950 ՀՀ դրամ, այսինքն՝ 1 մլն 262 հազար 681 դոլար: ՔՊ-ի դրամահավաքին, ինչպես արդեն գրել էին, հանգանակություններ էին արել «ԲԱՍ ՎՈՅԱԺ» ՍՊԸ-ն, ՀՀ ՊԵԿ ներքին անվտանգության վարչության պետ Գոռ Բալլաչյանը, ՔՊ խմբակցության պատգամավոր Կարեն Սարուխանյանը, Երեւանի քաղաքապետարանի շինբարեկարգման վարչության նախկին պետ Խորեն Գրիգորյանը, Երեւանի ավագանու անդամ Արմեն Կոտոլյանը եւ այլ հետաքրքիր դեմքեր: Այս անգամ ներկայացնում ենք ցուցակի հաջորդ հետաքրքիր քառյակին: ՔՊ-ի դրամահավաքին 200 հազար դրամ հանգանակել է Շիրակի մարզի Անի համայնքի ղեկավար Արման Սարիբեկյանը: Սեպտեմբերի 17-ին կայանալիք Երեւանի ավագանու ընտրություններին «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության ընտրական ցուցակի անդամ Գեղամ Բրսոյանը դրամահավաքի ամենաշռայլ նվիրատուներից էր, որը հանգանակել է 2 մլն 500 հազար դրամ: Բանն այն է, որ նման շռայլություն դրսեւորելուց հետո նա, ՔՊ ցուցակում լինելով հանդերձ, չընդգրկվեց Երեւանի ավագանու ցանկում: ՔՊ ավագանու ընտրացուցակում ընդգրկված եւ ավագանու անդամ չդարձած Շողիկ Վիրաբյանը եւս 2 մլն 500 հազար դրամ է հանգանակել: 2 մլն 500 հազար դրամ էլ ՔՊ դրամահավաքին հանգանակել է 2022 թվականի ապրիլի 20-ին ՀՀ ԱԻ նախարարի օգնական նշանակված Տաթեւիկ Հակոբյանը: Որտեղից այս պաշտոնյաներին այդքան գումար՝ դժվար չէ կռահել, բայց թե ինչպես է Նիկոլ Փաշինյանի «կոռուպցիան մերժող» թիմը ընդունել նրանցից կասկածելի ծագման շռայլությունները, միանգամայն անհասկանալի է:



«Ժողովուրդ» օրաթերթին հասած տեղեկությունների համաձայն՝ որոշում է կայացվել Նորատուսում ձկնորսների եւ պարեկների գործը մարզից տեղափոխել Երեւան եւ այն քննել մայրաքաղաքի դատարանում: «Ժողովուրդ» օրաթերթի տեղեկությունների համաձայն՝ Գեղարքունիքի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանը Նորատուսի հայտնի ձկնորսների գործով փոխել է մեղադրյալ Ալիկ Համբարձումյանի նկատմամբ ընտրված խափանման միջոց կալանավորումը եւ որպես խափանման միջոց ընտրել տնային կալանքը: Ավելին՝ դատարանը բավարարել է նաեւ պաշտպանի միջնորդությունը, եւ վարույթը կուղարկվի քննվելու Երեւան քաղաքի ընդհանուր իրավասության քրեական դատարան: 2023թ. դեկտեմբերի 19-ին՝ ժամը 12:40-ին, ոստիկանության Գեղարքունիքի մարզի ջրային պարեկային ծառայության աշխատակիցները «Սեւան ազգային պարկ» ՊՈԱԿ-ի ծառայողների հետ 2 նավակով ծառայություն են իրականացրել Սեւանա լճի Նորատուս բնակավայրի հատվածում: Այդտեղ նրանց են մոտեցել մոտ 200 ձկնորսական նավակներ: Ըստ հաղորդման՝ դրանցում գտնվող դիմակավորված բազմաթիվ անձինք պարեկների եւ «Սեւան ազգային պարկ» ՊՈԱԿ-ի նավերի վրա գտնվող անձնակազմի հասցեին հնչեցրել են հայհոյանքներ, սպառնացել են հրկիզել նրանց եւ նավերը, նրանց ուղղությամբ նետել են բենզինով լցված շշեր, փայտեր:

Շարունակությունը՝ ArmLur.am կայքում:

Մսամթերքի արտադրությամբ զբաղվող «Բեկոն» ընկերությունը դատարանի դռներն է ընկել: «Ժողովուրդ» օրաթերթին հայտնի դարձավ, որ ընկերությունը դիմել է դատարան ու պահանջում է 17.11.2023թ. թիվ 1520971/1 ակտն անվավեր ճանաչել: Նմանօրինակ երկու հայց էլ ընկերությունը դատարան է ներկայացրել 2023 թվականին: Ըստ ամենայնի, ՊԵԿ-ը գտել է խախտումներ ու տուգանել, ինչի հետ էլ մսամթերքի արտադրությամբ զբաղվող «Բեկոն» ընկերությունը համաձայն չէ: Ի դեպ, 2023 թվականին Բնապահպանության եւ ընդերքի տեսչական մարմնի տեսուչները հերթական շրջայցի ընթացքում Կոտայքի մարզում գործունեություն իրականացնող «Բեկոն պրոդուկտ» ՍՊԸ-ում հայտնաբերել են խորքային հորի ապօրինի հորատման դեպք: Ջրօգտագործում իրականացնելու նպատակով առանց համապատասխան փաստաթղթերի խորքային հորի ապօրինի հորատման աշխատանքներն անհապաղ կասեցվել էին: Կիրառվել էին վարչական պատասխանատվության միջոցներ:

ԶՐՈՒՅՑ

«ԳՈՒՅԵ ՑԱՆԿԱՑԵԼ Է ՀԱՃՈՅԱՆԱԼ ԸՆՏՐՈՂՆԵՐԻՆ»

«Ժողովուրդ» օրաթերթը զրուցել է ՔՊ խմբակցության ղեկավարի Նարեկ Ղահրամանյանի հետ:

-Պարոն Ղահրամանյան, թեեւ հայկական կողմը խոսում է խաղաղության պայմանագրի կնքման անհրաժեշտության մասին, ասում է, որ հնարավոր է սեղմ ժամկետում այդ պայմանագիրը կնքել, վերջերս իր հարցազրույցում Ադրբեջանի նախագահին իր հայտարարություններով ամբողջովին հակառակը ապացուցեց՝նոր տարածքային պահանջներ ներկայացնելով: Նա ասաց, որ 8 գյուղերի հարցն իրենց օրակարգում է մնում, Ջերմուկն իրենց քաղաքն է: Ինչպե՞ս այս ամենին կարձագանքեք, այս ամենից հետո ինչպե՞ս եք բանակցային հետագա գործընթացը շարունակելու:

-Դե, առհասարակ, եթե պետք է նայել երկու կողմից Ալիեւի հայտարարություններին՝ մեկը՝ ես անձամբ տեսնում եմ վիժեցնելու փորձ խաղաղության գործընթացի, մյուսը՝ երեւի նախընտրական քարոզարշավի նման մի բան էր: Գյուղերի հետ կապված՝ երկուստեք եթե կան օկուպացված տարածքներ, մեր 32 գյուղերի կենսական տարածքները գտնվում են Ադրբեջանի տարածքում: Երբ որ մենք հղում ենք անում Ալմա- Աթայի հռչակագրին, հենց դրա համար ենք անում. ըստ Ալմա-Աթայի հռչակագրի՝ պետք է գծվեն սահմանները, եւ դեմարկացիա ու դելիմիտացիա արվի, թե չէ հիմա Ալիեւը կարող է 8 չասել, 18 ասել, մենք էլ՝ 32 չասենք, 62 ասենք, բայց կա փաստաթուղթ, որի վրա հիմնված՝ պետք է գործընթաց սկսվի:

-Բայց այս սպառնալիքների ներքո ինչպե՞ս եք հետագա բանակցությունները պատկերացնում խաղաղության շուրջ: Ադրբեջանը ցույց տվեց, որ ինքն ամենեւին էլ պատրաստ չէ այդ խաղաղությանը:

-Մեր երկրի ղեկավարը ասել է, որ դա մեծ հարված է խաղաղության օրակարգին, բայց, ամեն դեպքում, համարել, որ ամբողջովին տպալված է, ո՛չ: Կրկնում եմ՝ Ալիեւը միշտ է այդպիսին եղել, եւ չմոռանանք նաեւ, որ մեկ ամսից Ադրբեջանում նախագահական ընտրություններ են. նաեւ, կարող է, ցանկացել է հաճոյանալ իր ընտրողներին:

-Պարոն Ղահրամանյան, նաեւ Ադրբեջանի նախագահը հայտարարեց, որ վերջերս Սանկտ Պետերբուրգում հանդիպման ժամանակ Նիկոլ Փաշինյանի հետ կարճ զրույց է ունեցել ու այս գյուղերի հարցով նաեւ նրա հետ է խոսել: Տեղյա՞կ եք՝ինչպես է արձագանքել Նիկոլ Փաշինյանը, ինչ են խոսել նախագահի հետ այդ կարճ զրույցի ընթացքում:

-Ո՛չ, տեղյակ չեմ. կարող եք հարցնել վարչապետի աշխատակազմին:

Զրուցեց ՔՐԻՍՏԻՆԱ ՄՈՒՇԵՂՅԱՆԸ

«ՀԱՆՐԱՅԻՆ ՁԱՅՆ»

ԴԱԴԱՐԵՑՎԱԾ Է ԱՆԴԱՄՈՒԹՅՈՒՆԸ

«Հանրային ձայն» կուսակցության կառավարման խորհուրդը հայտարարություն է տարածել Դոգ մականվամբ հայտնի Վարդան Ղուկասյանին կուսակցության շարքերից հեռացնելու եւ վերջինիս կողմից հավաք կազմակերպելու առնչությամբ:

Խորհուրդը նաեւ հայտնել է, որ դադարեցված են ոչ միայն Դոգի, այլեւ Երեւանի ավագանու «Հանրային ձայն» խմբակցության ղեկավարի լիազորությունները, կասեցված են վերջինիս որոշումները:

Հայտարարությունը ներկայացնում ենք ստորեւ.

«Ինչպես նախորդ հայտարարությամբ հայտնել էինք, 09.01.2024թ. «Հանրային ձայն» կուսակցության կառավարման խորհրդի որոշմամբ, հիմք ընդունելով կանոնադրության 3.8.5 կետը (կուսակցության անդամի անդամությունը դադարում է այլ երկրի քաղաքացիություն ձեռք բերելու դեպքում), դադարեցված է համարվել Վարդան Յուրիկի Ղուկասյանի՝ կուսակցության անդամությունը:

Այսօր լիազոր մարմինը գրանցել է 09.01.2024թ. «Հանրային ձայն» կուսակցության խորհրդի որոշումները, դրանք մտել են օրինական ուժի մեջ:

Այդ որոշումներով «Հանրային ձայն» կուսակցությունն ունի հետեւյալ կազմը՝

կառավարման խորհուրդ: 18 հոգի,

կառավարման խորհրդի ղեկավար՝ Արտակ Գավրուշայի Գալստյան:

Խորհրդի որոշումներից հետո բլոգեր Վարդան Ղուկասյանը՝ եթերով, իսկ այնուհետ սոցիալական կայքերով հայտարարություն է տարածել «Հանրային ձայն» կուսակցության կառավարման խորհրդի անունից, որ, իբր, վերջիններս 19 հունվարի 2024թ. ժամը 18:00-ին հրավիրել են կուսակցության համագումար, եւ հրավիրել է մարդկանց հավաքի:

«Հանրային ձայն» կուսակցության կառավարման խորհուրդը արդեն իսկ հանդես է եկել հերքող հայտարարությամբ, սակայն ունենք մտավախություն, որ որոշակի չիրազեկված մարդիկ կարող են այնուամենայնիվ հայտնվել շփոթության մեջ եւ գնան հավաքի:

Այս առումով հայտարարում ենք, որ «Հանրային ձայն» կուսակցության կառավարման խորհուրդը համագումար չի հրավիրել, կազմակերպված հավաքի հետ առնչություն չունի, հավանական սադրանքների, հակօրինական, ահաբեկչական գործողությունների համար պատասխանատվություն կրել չի կարող, քանի որ չի հանդիսանում տվյալ հավաքի կազմակերպիչ:

Ինչպես նաեւ հաղորդում ենք ներկայացրել ՀՀ իրավապահներին այն մասին, որ «Հանրային ձայն» կուսակցության կառավարման խորհրդի անունը օգտագործելով, այն էլ՝ այն անձի կողմից, որն այլեւս առնչություն չունի կուսակցության հետ, նման հավաք կազմակերպելը իր մեջ առերեւույթ պարունակում է ինքնիրավչության հանցակազմ եւ քրեորեն պատժելի է, անհրաժեշտ է ձեռք առնել համապատասխան միջոցներ ապօրինի հավաք կազմակերպող բլոգերի՝ ՀՀ-ում գտնվող աջակիցներին բացահայտելու եւ հավաքի եկած քաղաքացիների անվտանգությունը եւ հասարակական կարգը ապահովելու նպատակով:

Իրավապահներին նաեւ հայտնել ենք, որ, խորհրդի նախագահի որոշմամբ, դադարեցվել է մինչ այդ «Հանրային ձայն» կուսակցության Երեւանի ավագանու ֆրակցիայի ղեկավար Վահան Ավագյանին տրված լիազորագիրը, չեղյալ են հայտարարվել վերջինիս կողմից կայացված բոլոր որոշումները, որոնք չեն ստացել կառավարման խորհրդի հավանությունը: Հայտնել ենք նաեւ, որ կուսակցության կնիքը 09.01.2024թ. ժամը 12:00-ից գտնվում է խորհրդի ղեկավարի նոր պաշտոնակատարի մոտ, եւ նոր կնիք պատվիրելու այլ անձանց ցանկացած փորձ հակաօրինական է, քրեորեն պատժելի, իսկ դրանով կամ նախկինով կնքված եւ խորհրդի կողմից չհաստատված ցանկացած փաստաթուղթ հակաօրինական եւ ուժ չունեցող»:

Հիշեցնենք՝ հունվարի 11-ի առավոտյան «Հանրային ձայն» կուսակցության կառավարման խորհուրդը հայտարարություն էր տարածել՝ տեղեկացնելով, որ կուսակցության խորհրդի անդամ Վարդան Ղուկասյանը ՌԴ քաղաքացիություն ունի, եւ այդ հիմքով դադարեցված է համարվում նրա անդամությունը կուսակցությանը:

«Հանրային ձայն» կուսակցության հիմնադիր, խորհրդի անդամ Վարդան Ղուկասյանն էլ, որը հանրության շրջանում առավել հայտնի է Դոգ մականվամբ, ուղիղ եթերում հայտարարել էր, որ եթե ինքը կուսակցությունում չլինի, այն կդադարի գոյություն ունենալ:

ԴՊՐՈՑ Է ՀԻՄՆԵԼ

Իշխող «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցությունը նոր դպրոց է հիմնել՝«Ժողովրդավարության դպրոց» անունով: ՔՊ կուսակցության դպրոցն արդեն ընդունելություն է հայտարարել: Կուսակցության փոխնախագահ Վահագն Ալեքսանյանը «Ժողովուրդ» օրաթերթին հայտնեց, որ դպրոցը մարտի սկզբից կսկսի գործել: Այն տեղակայված է լինելու ՀՀԿ-ի եւ ՀՅԴ-ի հարեւանությամբ գտնվող կուսակցության նոր՝ Հանրապետության փողոցում գտնվող գրասենյակում, որը դեռ վերանորոգման փուլում է: Թե ովքեր են դասավանդելու դպրոցում, եւ ինչ են ուսուցանելու, ՔՊ փոխնախագահն ասաց՝ քաղաքականության տեսությանն առնչվող տարբեր հարցեր, ինչպես նաեւ կոնկրետ կուսակցության ծրագրին ու գաղափարախոսությանն առնչվող հարցեր: Դպրոցում դասավանդելու են ՔՊ կուսակցության անդամները, այդ թվում՝պատգամավորները: Ինչպես հայտնում են կուսակցությունից, դպրոց կարող է հաճախել ցանկացած անձ. ՔՊ կուսակցության անդամ լինելը պարտադիր չէ:

ԱՆՊԱՏԺԵԼԻ ԵՆ

Նիկոլ Փաշինյանի իշխանությունում ամենաթողությունն ու անպատժելիությունը գրեթե ամեն օր նոր «բարձունքների» են հասնում:

Թեեւ թավշյահեղափոխականները իշխանության եկել են կոռուպցիան արմատախիլ անելու, անպատժելիությունը վերացնելու խոստումով, բայց նրանց օրոք այս արատավոր երեւույթներն ավելի խորանում են, շատ դեպքերում՝ գերազանցում նախկին իշխանությունների օրոք տիրող բարքերին:

Թերեւս բերենք մեկ օրինակ. արդեն տեւական ժամանակ է, ինչ համացանցը ողողված է առողջապահության նախարար Անահիտ Ավանեսյանի ոլորտային ձախողումների մասին հստակ փաստերով:

Դրանցից թերեւս ամենաթարմն էլ այն է, որ նախորդ տարի՝ տարեվերջին, մեծ շուքով շահագործման հանձնվեց Գեղարքունիքի մարզի «Մարտունի» բժշկական կենտրոնը, որի կառուցման համար ՀՀ կառավարությունը պետական բյուջեից տրամադրել է 2 մլրդ 470 մլն դրամ կամ մոտ 6.5 մլն ԱՄՆ դոլար:

Հիվանդանոցի բացման թեման Առողջապահության նախարարը տարբեր առիթներով օգտագործում էր իր PR-ն ապահովելու ու վարկանիշը բարձրացնելու համար:

Այնինչ, հիմա, երբ պարզվում է, որ հիվանդանոցը չի աշխատում, իրական պատասխանատուն՝Ավանեսյանը, այդպես էլ իր պատիժը չի կրում. դրա փոխարեն նա աշխատանքից ազատում է ԱՆ փոխնախարար Արմեն Նազարյանին եւ Առողջապահական ծրագրերի իրականացման գրասենյակի տնօրեն Երվանդ Էլիբեկյանին:

Այստեղ թերեւս տեղին է մի համեմատական անցկացնել. երբ Սերժ Սարգսյանի օրոք պաշտոնավարած առողջապահության նախարար Դերենիկ Դումանյանի շուրջ մեծ սկանդալ բարձրացավ, նրա գործունեության հետ կապված աղմկահարույց բացահայտումներ եղան, երկու տարի պաշտոնավարած Դումանյանին Սերժ Սարգսյանը ոչ միայն հեռացրեց պաշտոնից, այլ նաեւ ՀՀԿ գործադիր մարմնի կազմից:

Հիմա ստացվում է՝թավշյահեղափոխականներն անպատժելի են. այն, ինչ չէր կարելի Սերժ Սարգսյանին ու նախկին իշխանություններին, կարելի է Փաշինյանին ու ՔՊ-ականներին:

ՍՊԱՆՎՈՒՄ ԷԻՆ ԿԱՆԱՅՔ, ԵՐԵԽԱՆԵՐ...

ԱԺ մարդու իրավունքների պաշտպանության եւ հանրային հարցերի մշտական հանձնաժողովի՝ ապօրինաբար լիազորությունները դադարեցված նախագահ, անկուսակցական պատգամավոր Թագուհի Թովմասյանը սոցցանցի իր էջում գրել է.

«Հայաստան-Ավստրիա բարեկամական խմբի կազմով Ազգային ժողովում հյուրընկալեցինք Ավստրիայի խորհրդարանի պատգամավորներ Էվա Էռնստ Ձիձիչին, Սիբիլ Համանին, Յոհաննես Մարգրայթերին, Քրիստիան Օքսոնիչին, Ավստրիայի հայ համայնքի ներկայացուցիչներ Նիկոլ Խաչատուրովային եւ Հերբերտ Լանգսներին:

Խոսելով Արցախի Հանրապետության դեմ Ադրբեջանի զինված ագրեսիաների, էթնիկ զտումների եւ ցեղասպանության քաղաքականության մասին, ինչի հետեւանքով 120000 արցախահայությունը զրկվեց իր պատմական հայրենիքից՝ բռնի տեղահանմամբ՝ արձանագրեցի, որ միջազգային որեւէ իրավական նորմ մեր տարածաշրջանում չի գործում:

Տեղահանման օրերին Արցախում սպանվում էին կանայք, երեխաներ, քաղաքացիական այլ անձինք, սակայն միջազգային հանրության կողմից որեւէ արձագանք չեղավ:

Գործընկերներիս ուշադրությունը հրավիրեցի Արցախում մարդկանց սեփականության իրավունքի վերականգնման, հոգեւոր-մշակութային ժառանգության պահպանման անհրաժեշտությանը: Ներկայացրի, թե ինչպես են Ադրբեջանի ձեռքով Արցախի հայկական եկեղեցիները վերածվում մզկիթների, ոչնչացվում մշակութային կոթողները, պղծվում գերեզմանները:

Անդրադարձա Արցախում բենզինի պայթյունի դեպքի դաժան հետեւանքներին, որի ժամանակ անգամ առաջին անհրաժեշտության օգնություն հնարավոր չի եղել պատշաճ իրականացնել Ադրբեջանի առաջացրած խոչընդոտների պատճառով:

Նշեցի Արցախի Հանրապետության քաղաքական եւ ռազմաքաղաքական վերնախավի, բոլոր գերիների անհապաղ վերադարձի, անհայտ կորածներին գտնելու ուղղությամբ միջազգային ջանքերի կարեւորության մասին: Տեղեկացրի, որ 2020թ. հունվարի 31-ից Ադրբեջանը միակողմանի դադարեցրել է վերջիններիս որոնողական աշխատանքները:

Ընդգծեցի, որ քաղաքակիրթ հանրությունը պետք է ցանկացած ջանք գործադրի, որպեսզի պահպանվի ՀԱՅԿԱԿԱՆ Արցախը մինչեւ արցախահայության՝ իր պատմական հայրենիք վերադառնալը»:

ՌԴ ԴԻՐՔՈՐՈՇՈՒՄԸ

«ԱՐԵՎՄՏՅԱՆ ԵՍԱՍԻՐԱԿԱՆ ՆԿՐՏՈՒՄՆԵՐԸ ԽԱՆԳԱՐՈՒՄ ԵՆ»

Ռուսաստանի արտաքին գործերի նախարար Սերգեյ Լավրովը հայտարարել է, որ Արեւմուտքը չի ցանկանում թույլ տալ Մոսկվայի միջնորդությամբ Երեւանի եւ Բաքվի միջեւ ձեռք բերված պայմանավորվածությունների իրագործումը:

«Ժողովուրդ» օրաթերթի տեղեկացմամբ՝ այս մասին Լավրովը հայտարարել է հունվարի 18-ին կայացած մամուլի ասուլիսի ժամանակ:

Լավրովն այս համատեքստում որպես օրինակ է բերել սահմանազատման խնդիրը:

«Կողմերը համաձայնագիր են կնքել, որ ստեղծելու են սահմանազատման հանձնաժողով, որին ռուսական կողմը կմասնակցի որպես խորհրդատու: Մեզ այնտեղ չեն հրավիրում: (խմբ.՝ Եվրամիության խորհրդի նախագահ) Շառլ Միշելն արդեն հայտարարել է, որ ԵՄ-ն կզբաղվի սահմանազատմամբ, չնայած... ո՛չ Հայաստանը, ո՛չ էլ Ադրբեջանը երբեւէ չեն եղել ԵՄ ներկայիս տարածքում որեւէ ասոցիացիայի մաս, եւ ԵՄ-ի մոտ որեւէ քարտեզ լինել չի կարող: Քարտեզներ ունի ՌԴ-ն, եւ դա ձեռնտու է կողմերին: Բայց դա ձեռնտու չէ ԵՄ-ին, ձեռնտու չէ ԱՄՆ-ին, որը նույնպես ցանկանում է սահմանազատում կատարել օվկիանոսից այն կողմ... Ցավալի է, որ նման արեւմտյան եսասիրական նկրտումները խանգարում են թե՛ Հայաստանի, թե՛ Ադրբեջանի հիմնարար նկրտումների իրականացմանը», - նշել է ՌԴ ԱԳՆ ղեկավարը:

Անդրադառնալով Հայաստանի եւ Ադրբեջանի միջեւ խաղաղության համաձայնագրի կնքմանը՝ ՌԴ արտգործնախարարը նշել է, որ Ադրբեջանը պատրաստ է այդ համաձայնագիրը կնքել Ռուսաստանի տարածքում, սակայն Երեւանի դիրքորոշումը պարզ չէ:

«Որքանով է դրան պատրաստ Երեւանը՝ ինձ հայտնի չէ, չնայած համապատասխան ազդանշանները վաղուց ուղարկվել են Հայաստանի մայրաքաղաք», - ասել է Լավրովը՝ հիշեցնելով, որ ի սկզբանե համաձայնություններ են ձեռք բերվել Ռուսաստանի, Հայաստանի եւ Ադրբեջանի միջեւ, որից հետո «եվրոպացիներն ու ամերիկացիները սկսել են ակտիվորեն ներգրավվել այդ գործընթացում»»,- ասել է Լավրովը:

Ինչ վերաբերում է խաղաղության պայմանագրի կնքման հարցում առաջընթացի բացակայությանը, ապա, ըստ Լավրովի, դա պայմանավորված է Երեւանի դիրքորոշմամբ:

«Չգիտեմ՝ Երեւանին ով ինչ է խորհուրդ տալիս..., բայց մենք տեսանք, թե ինչպես Եվրամիությունը, Ֆրանսիան, Գերմանիան անմիջապես սկսեցին առանց հրավերի ներգրավվել այդ գործընթացներում, հենց հասկացան, որ ռուս-հայ-ադրբեջանական գործընթացն արդյունք է տալիս թե՛ երթուղիների ապաշրջափակման, թե՛ սահմանների սահմանազատման, թե՛ խաղաղության պայմանագրի պատրաստման հարցում», - ասել է դիվանագետը:

Մամուլի ասուլիսի ժամանակ Սերգեյ Լավրովն անդրադարձել է նաեւ Հայաստանում ԵՄ առաքելությանը: ՌԴ արտգործնախարարի կարծիքով՝ այդ առաքելությունը ցանկանում է պարզել, թե տարածաշրջանում ինչով է զբաղված Ռուսաստանը. Մոսկվան այս հարցը քննարկել է Երեւանի հետ:

«Երբ Հայաստանի հետ համաձայնեցվեց Ադրբեջանի սահման ՀԱՊԿ դիտորդներ ուղարկելու մասին փաստաթուղթը, Երեւանն ասաց, որ չի կարող ստորագրել, եւ գրեթե միաժամանակ այնտեղ մեկնեց ԵՄ առաքելությունը: Դա Հայաստանի ղեկավարության ընտրությունն է: ԵՄ առաքելությունը սկսեց ակտիվորեն հետաքրքրվել Հայաստանում տեղակայված մեր սահմանապահների աշխատանքով: Ըստ էության, նրանք սկսեցին զբաղվել ոչ թե վստահության ամրապնդման միջոցներով, այլ անընդհատ փորձում էին պարզել, թե ինչ, որտեղ, ինչպես է տեղի ունենում, ինչ է անում այնտեղ Ռուսաստանը, ինչ կոնկրետ խնդիրներ են նրա առջեւ դրված»,- ասել է Լավրովը:

ՔԱՂԲԱՆՏԱՐԿՅԱԼ Է

ԿԱՐՈՂ ԵՆ ՀԻՄՆԱՎՈՐԵԼ ԱՍՏՂԵՐԻ ԴԱՍԱՎՈՐՈՒԹՅԱՄԲ

ՉԱՄ-ները գրում են. «Այն, որ Արմեն Աշոտյանը քաղբանտարկյալ է, եւ նրա նկատմամբ քաղաքական հետապնդում է իրականացվում, կարծում ենք՝ ակնհայտ է բոլոր ողջամիտ, դատողունակ անձանց, նույնիսկ այն հայրենակիցներին, որոնք ՀՀԿ կալանավորված փոխնախագահի գործունեության, մեղմ ասած, «երկրպագուների» շարքերում չեն: Բայց հետաքրքիր է, թե լիովին փաշինյանական իշխանության քմահաճույքներով առաջնորդվող ԲԴԽ-ն ինչու է ցանկացել եւս մեկ անգամ ապացուցել, որ, այո՛, Արմեն Աշոտյանը քաղաքական բանտարկյալ է:

Բանն այն է, որ ԲԴԽ-ն պաշտոնապես պարզաբանում է տարածել, որով հանրությանը բացատրում է, թե ինչու է դատարանը որոշել կալանքի տակ պահել Արմեն Աշոտյանին: Սա տարօրինակ է այնքանով, որ նույն ԲԴԽ-ն, օրինակ, հանրային հնչեղություն ստացած բազմաթիվ այլ գործերով նման մեկնաբանություններ, պարզաբանումներ, բացատրություններ, որքան հիշում ենք, չի ներկայացրել: Արմեն Աշոտյանի «գործի» վերաբերյալ Կարեն Անդրեասյանի գլխավորած կառույցն իր պարտքն է համարել հանդես գալ որպես կալանքի որոշում կայացրած դատավորի... պաշտպան: Մի խոսքով, ԲԴԽ պարզաբանումը միանգամայն «նոր խոսք» է Հայաստանում արդարադատություն ասվածի ոչնչացման գործում:

Մյուս հետաքրքիր հանգամանքն այն է, որ ԲԴԽ պարզաբանման մեջ նշված է. «...Գործում առկա փաստական տվյալները բավարար են եղել հանգելու հետեւության, որ քանի դեռ որեւէ ապացույց չի հետազոտվել, պարոն Աշոտյանն ազատության մեջ հայտնվելու դեպքում կարող է խոչընդոտել քրեական վարույթին, այդ թվում՝ ապօրինի միջամտել ապացուցման գործընթացին»: Նույն հաջողությամբ ԲԴԽ-ն ու կալանք դակող դատավորները առաջիկայում կարող են նման որոշումները հիմնավորել, օրինակ, աստղերի դասավորությամբ, սուրճի գավաթով, վերջապես՝ եղունգ նայելով: Չէ, լո՛ւրջ: Այսպես որ գնաց, Կարեն Անդրեասյանը վաղը, մյուս օրը կարող է «ապացուցման գործընթացին ապօրինի միջամտելու» փորձ գնահատել նաեւ... դատին ամբաստանյալի մասնակցությունը կամ փաստաբան ունենալը:

Մյուս կողմից՝ սա եւս մեկ անգամ ապացուցում է այս իշխանության օրոք «արդարադատության» բազմակի ստանդարտները: Այսինքն՝ ՔՊ-ականները կամ իշխող ռեժիմին ծառայություն մատուցածներն ու մատուցողները կարող են հանցանք գործել, ասենք՝ վրաերթի միջոցով մարդ սպանել ու ազատ շրջել, նրանք, դե, չեն ազդի «ապացույցների հետազոտման վրա», թեկուզ լինեն հենց իրավապահ համակարգի ներկա կամ մի քիչ նախկին աշխատակից, իսկ, այ, ռեժիմի քաղաքական հակառակորդները պետք է կալանավորվեն, նույնիսկ՝ ՖԲ-ում Փաշինյանի մասին «փիս-փիս» բաներ գրողները:

Ինչեւէ, ամեն դեպքում, ԲԴԽ-ն իր տարածած պարզաբանմամբ հրաշալի կերպով ապացուցեց, որ Արմեն Աշոտյանը հենց քաղաքական բանտարկյալ է: Կարելի է սպասել ԲԴԽ նոր հայտարարություններին. չէ՞ որ քաղբանտարկյալների պակաս Հայաստանը չունի»:

ՆՈՐ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ

ՓՈՐՁՈՒՄ ԵՆ ԱՇԽԱՏԱՆՔԸ ՈՉ ԹԱՓԱՆՑԻԿ ԴԱՐՁՆԵԼ

2023 թվականի դեկտեմբերի 19-ին իրավական ակտերի նախագծերի միասնական e-draft.am կայքում հրապարակվել է ««Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ կատարելու մասին» օրենքի նախագիծ, որով նախատեսվում է «Տեղեկատվության ազատության մասին» գործող օրենքը վերանվանել «Տեղեկատվության ազատության եւ հանրային տեղեկատվության մասին» օրենք:

Ըստ Ինֆորմացիայի ազատության կենտրոնի՝ օրենքի նախագծի նպատակը հետեւյալն է.

«Այն նպատակ ունի հնարավորություն ստեղծել առավել արդյունավետ կերպով իրականացնել Հայաստանի թվայնացման, կառավարության, տնտեսության եւ հասարակության թվային փոխակերպման նպատակները»:

Ինֆորմացիայի ազատության կենտրոնի փորձագետ Լիանա Դոյդոյանը ArmLur.am-ի հետ զրույցում նշեց, որ չի կարող տեղեկատվության ազատության մասին իրավունքը զուգակցվել տվյալների դասակարգման, պահպանման եւ մշակման տեխնիկական լուծումներ առաջարկող օրենքի հետ եւ դառնալ մեկ ընդհանուր օրենք:

«Սա Կենտրոնի դիրքորոշումն է եղել ի սկզբանե, երբ սկսել են մշակել տվյալների վերաբերյալ օրենսդրությունը: Երբ ԻԱԿ-ը Կառավարության հետ միասին քննարկել է այս օրենքի նախագիծը, Կենտրոնը՝ որպես 22 տարի այս ոլորտում գործող կառույց, տվել է փորձագիտական աջակցություն: Ի սկզբանե հարցը դրվել է մեր կողմից, որ տվյալների դասակարգման եւ մշակման օրենքի նախագիծը չի կարող «Տեղեկատվության ազատության մասին» օրենքի շրջանակներում լինել եւ մաս կազմել»:

Ըստ Լիանա Դոյդոյանի՝ անթույլատրելի է մի օրենքի տակ մտցնել երկու՝ իրար հետ կապ չունեցող օրենք: Նախագծի ներկայացման պատճառներից մեկն այն է, որ «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքով չի կարգավորվում տվյալների դասակարգման եւ մշակման հատվածը, որից էլ բխել է օրենքի նման նախագիծ ներկայացնելը: Բանն այն է, որ մինչ օրս Կառավարությունն այս հարցում որեւէ կարգավորում չի սահմանել, եւ, չգիտես՝ ինչու, առանձին օրենքի նախագիծ ներկայացնելու փոխարեն, այն խցկում են «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքում:

«Օրենքի նախագծի հիմնավորումը տվյալների մշակման, վերլուծության եւ դասակարգման մասին գործողություններ են, այսինքն՝ այս նախագծի հիմնավորումը որեւէ կապ չունի տեղեկատվության ազատության օրենսդրության հետ: Մեր մոտեցմամբ սա գիտելիքի պակասի, մասնագետների պակասի, չուզենալու ընկալելու մոտեցում է եղել, որովհետեւ Կենտրոնը բազմիցս իր մոտեցումը գրավոր փոխանցել է Կառավարություն, որում ասվում է՝ պետք է այս երկու օրենքներն անջատել իրարից: Մեզ բազմիցս հավաստիացրել են, որ այդպես են անելու, քանի որ ներկայացրել ենք հստակ հիմնավորումներ: Բայց, ի վերջո, շատ անակնկալ կերպով տարեվերջին անկախ խորհրդակցությունից այն հայտնվել է իրավական ակտերի նախագծերի միասնական e-draft.am հարթակում»,- հավելեց Դոյդոյանը:

Իրավական ակտերի նախագծերի միասնական հարթակում նախագծին կողմ քվեարկել են 26 հոգի, իսկ դեմ՝ 9-ը:

Նախագծով՝

«փոփոխվել են ՏԱ օրենքի որոշ հասկացություններ, որոշ կարգավորումների ձեւակերպումներ այն պարագայում, որ փոփոխությունների արդյունքում կան թյուրըմբռնումների տեղիք տվող եզրույթներ, վիճելի ձեւակերպումներ եւ միմյանց հակասող դրույթներ,

«կան տեղեկատվության ազատության իրավունքի տեսանկյունից խնդրահարույց ծավալուն լրացված դրույթներ եւ կարգավորումներ, որոնք ուղղակիորեն կապ չունեն տեղեկատվության ազատության իրավունքի հետ,

«խեղաթյուրված է տեղեկատվության ազատության անկախ լիազոր մարմնի գաղափարը, եւ ներկայացվող մոդելը որեւէ առնչություն չունի ՏԱ լիազոր մարմնի միջազգային լավագույն փորձի հետ:

Երեւանի մամուլի ակումբի հիմնադիր, քաղաքական վերլուծաբան Բորիս Նավասարդյանը ArmLur.am-ի հետ զրույցում նշեց, որ այս նախագծով քայլ է արվում խոչընդոտել պետական կառույցների թափանցիկ աշխատանքին, մանավանդ՝ լրատվամիջոցների հետ:

«Մենք եւս դեմ ենք արտահայտվում, ինչպես բոլոր լրագրողական կազմակերպությունները, եւ գտնում ենք, որ այն փոփոխությունները, որոնք առաջարկվում են, ընդհանրապես պետք է կապ չունենան «Տեղեկատվության ազատության մասին» օրենքի հետ. դրանք լրիվ այլ դաշտից են: Եթե դրանք ընդգրկվեն նշված օրենքում, այդ օրենքի արդյունավետությունը կորչում է: Եթե տվյալների պահպանությունը խառնվում է տեղեկատվության ազատության հետ, դա դառնում է խոչընդոտ պետական կառույցների աշխատելու համար: Տվյալների պահմանության պատրվակով փորձում են պետական կառույցների աշխատանքը ոչ թափանցիկ դարձնել: Մենք փորձում ենք հասկացնել եւ պնդել, որ այդ երկու հարցերը իրարից անջատ դիտարկվեն»:

ԷՄՄԱ ՄԻՔԱՅԵԼՅԱՆ

ՔՐԵԱԿԱՆ

ԹՄՐԱՄԻՋՈՑՆԵՐԻ ՄԱՔՍԱՆԵՆԳՈՒԹՅՈՒՆ

ՀՀ քննչական կոմիտեի Սյունիքի մարզային քննչական վարչությունում քննություն է տարվում՝ առանձնապես խոշոր չափերով թմրամիջոցների մաքսանենգություն կատարելու եւ առանձնապես խոշոր չափերով թմրամիջոցներ իրացնելու դեպքի հանգամանքները պարզելու ուղղությամբ:

2024թ. հունվարի 11-ին ՀՀ ՆԳՆ ոստիկանության Կապանի բաժնից ՀՀ քննչական կոմիտեի Սյունիքի մարզային քննչական վարչություն հաղորդում է ստացվել այն մասին, որ ձեռնարկված օպերատիվ-հետախուզական միջոցառումների շրջանակում Ճակատեն բնակավայրի մոտ՝ ոստիկանական հենակետում, առանձնապես խոշոր չափերով թմրանյութ իրացնելու կասկածանքով, կանգնեցվել է «Կրայսլեր» մակնիշի ավտոմեքենա, որի խուզարկությամբ հայտնաբերվել են 10 կիլոգրամից ավելի քաշով տարբեր տեսակի թմրամիջոցների նմանվող զանգվածներ:

Առանձնապես խոշոր չափերով թմրամիջոցների մաքսանենգություն կատարելու եւ իրացնելու անմիջականորեն ծագած հիմնավոր կասկածի առկայության հիմքով՝ վերոհիշյալ ավտոմեքենայի վարորդը եւ ուղեւորը ձերբակալվել են եւ ներկայացվել վարույթն իրականացնող մարմնին:

Դեպքի առթիվ ՀՀ քննչական կոմիտեի Սյունիքի մարզային քննչական վարչությունում նախաձեռնվել է քրեական վարույթ:

Պարզվել է որ ավտոմեքենայի խցիկում հայտնաբերված թմրամիջոցների նմանվող զանգվածի ընդհանուր քաշը կազմել է շուրջ 12 կգ:

Քննչական, ինչպես նաեւ օպերատիվ հետախուզական միջոցառումների արդյունքում պարզվել է, որ ավտոմեքենայի վարորդը եւ ուղեւորը, նախնական պայմանավորվածություն ունենալով ԻԻՀ՝ քնությամբ դեռեւս ինքնությունը չպարզված անձի կամ անձանց հետ, հունվարի 11-ին մեկնել են հայ-իրանական սահմանի համապատասխան տեղանք, որտեղից վերցրել են պոլիէթիլենային երեք խոշոր փաթեթներով ԻԻՀ-ի տարածքից մաքսանենգ ճանապարհով փոխանցված թմրանյութերը, տեղափոխել դրանք ավտոմեքենայի խցիկ եւ հեռացել, սակայն ետդարձի ճանապարհին օպերատիվ տվյալների իրացման արդյունքում բռնվել են ոստիկանության ծառայողների կողմից:

Ձեռք բերված փաստերի հիման վրա՝ նրանց նկատմամբ հարուցվել է հանրային քրեական հետապնդում, եւ նշված երկու անձանց մեղադրանք է ներկայացվել՝ ՀՀ քրեական օրենսգրքի 393-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետով (իրացման նպատակով առանձնապես խոշոր չափերով թմրամիջոցների շրջանառությունը) եւ 46-399-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետով (առանձնապես խոշոր չափերով թմրամիջոցների մաքսանենգությունը):

Որպես խափանման միջոց՝ վերջիններիս նկատմամբ ընտրվել է կալանավորումը:

Նախաքննությունը շարունակվում է: Ձեռնարկվում են անհրաժեշտ միջոցառումներ՝ թմրամիջոցների ձեռք բերման աղբյուրը, ինչպես նաեւ ապօրինի շրջանառության ողջ շղթան պարզելու ուղղությամբ:

ՆԳՆ ոստիկանության համապատասխան ստորաբաժանմանը տրվել են հանձնարարություններ:

ԽՈՒԼԻԳԱՆՈՒԹՅՈՒՆ

ԱՌԱՎԵԼՈՒԹՅՈՒՆՆ ԸՆԴԳԾԵԼՈՒ ՄՈԼՈՒՑՔՈՎ ՏԱՐՎԱԾ

ArmLur.am-ին հայտնի դարձավ, որ Էդգար Արմենի Կուչուկյանին մեղադրանք է առաջադրվել այն բանի համար, որ նա 2023 թվականի հոկտեմբերի 09-ին՝ ժամը 19:20-ի սահմաններում, Երեւան քաղաքի Գայի պողոտա 43-րդ շենքի 3-րդ շքամուտքի մոտ քննությամբ չպարզված երկու այլ անձանց հետ մոտեցել է Արթուր Աշոտի Չախոյանին եւ հարցրել. «Չճանաչեցի՞ր ինձ»: Սրան ի պատասխան՝ վերջինս հայտնել է՝ ոչ:

Դրանից հետո, տրված պատասխանը որպես առիթ օգտագործելով, ինքնությունները չպարզված անձանց հետ խմբի կազմում, գիտակցելով եւ փոխլրացնելով միմյանց գործողությունները, խուլիգանական դրդումներով, այն է՝ չնչին առիթով, սեփական անձի առավելությունն ընդգծելու մոլուցքով տարված, հարձակվել են Արթուր Չախոյանի վրա, ոտքերով եւ ձեռքերով հարվածներ հասցրել նրա մարմնի տարբեր մասերին՝ վերջինիս առողջությանը պատճառելով թեթեւ վնասի հատկանիշներ չպարունակող՝ ստորին շրթունքի արյունազեղման, որովայնի, զույգ ծնկան հոդերի շրջանների քերծվածքների տեսքով վնասվածքներ: Էդգար Կուչուկյանը եւ չպարզված երկու անձինք դիմել են փախուստի, ինչի ընթացքում Էդգար Կուչուկյանին մոտենալուց հետո վերջինս ոտքի է կանգնել եւ գրպանից հանելով դանակը՝ հարվածներ է հասցրել Ա. Չախոյանի որովայնի ձախ հատվածին եւ զույգ դաստակների շրջաններին՝ վերջինիս առողջությանը պատճառելով թեթեւ վնասի հատկանիշներ չպարունակող՝ կրծքավանդակի ձախ կեսի քերծվածքի եւ զույգ դաստակների շրջաններին կտրված վերքերի ձեւով մարմնական վնասվածքներ:

ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ

● *Ըստ ոստիկանության տվյալների՝ հունվարի 17-ից 18-ը ՀՀ ՆԳՆ ոստիկանության ստորաբաժանումները բացահայտել են հանցագործության 65 դեպք, որոնցից 2-ը՝ նախկինում կատարված:*

ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

ՄԱՐԶ

ՏՆՕՐԵՆՆԵՐ՝ ԱՌԱՆՑ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ

Տավուշի մարզում բարձրագույն կրթություն չունեցող շատ ուսուցիչների ազատել են աշխատանքից, նույն պատճառով գործից ազատել են մարզի բազում գյուղերի վարչական ղեկավարների: Տավուշի մարզի հանրակրթական դպրոցների տնօրենների մի մասը չունի բարձրագույն մանկավարժական կրթություն, սակայն շարունակում է պաշտոնավարել: Ի պատասխան տեղեկատվական իմ հարցմանը՝Տավուշ մարզպետարանից հայտնել են, որ մարզի հանրակրթական 76 դպրոցների տնօրեններից 62-ն ունեն բարձրագույն մանկավարժական կրթություն:

«ԱՊԱԳԱ ԿԱ»

2023թ. դեկտեմբերի 1-ին Դիլիջան համայնքի ավագանին որոշել է Դիլիջան համայնքի ղեկավար Դավիթ Սարգսյանի վարձատրության չափը 2024 թվականի համար սահմանել ամսական 560000 ՀՀ դրամ: ՔՊ կուսակցության Դիլիջանի կազմակերպության ղեկավար Դավիթ Սարգսյանը մինչեւ 2018-ի թավշյա հեղափոխությունը բենզալցակայանում վառելիքի լիցքավորող է եղել: 1984թ. ծնված Դ. Սարգսյանն ավարտել է Դիլիջանի պետական քոլեջը, ներկայումս հեռակա սովորում է Հայաստանի Եվրոպական համալսարանում:

ՄՈՐԹԸ՝ ՍՊԱՆԴԱՆՈՑՆԵՐԻՑ ԴՈՒՐՍ

Հունվարի 16-ին Տավուշի մարզպետ Հայկ Ղալումյանը հանդիպում-քննարկում է անցկացրել մարզի սպանդանոցների պատասխանատուների մասնակցությամբ: Դրան մասնակցել են մարզում գործող բոլոր սպանդանոցների՝ Բերդի, Նավուրի, Գետահովտի եւ Նոյեմբերյանի սպանդանոցների ղեկավարները: Դիլիջան քաղաքում եւ նույնանուն համայնքում ոչ մի սպանդանոց չի գործում: Հանդիպմանը մասնակցել են նաեւ մարզպետի աշխատակազմի գլխավոր քարտուղար Արման Գեւորգյանը, ՍԱՊԾ Տավուշի մարզային կենտրոնի պետ Վասիլ Գալստյանը, ՀՀ էկոնոմիկայի նախարարության «Գյուղատնտեսական ծառայությունների կենտրոն» ՊՈԱԿ-ի համաճարակաբան Հունան Եգանյանը, մարզպետի աշխատակազմի համապատասխան ոլորտի պատասխանատուները: Հանդիպմանը քննարկվել են սպանդանոցների աշխատանքի հետ կապված մի շարք կազմակերպչական հարցեր: Սպանդանոցների պատասխանատուները ներկայացրել են իրենց խնդիրները, որոնցից է սպանդանոցներում ստացվող մսի իրացման խնդիրը: Ուշադրություն է հրավիրվել ֆերմեր-սպանդանոց փոխհարաբերությունների բարելավման ու ակտիվացման վրա, քննարկվել են նաեւ սպանդանոց բերված կենդանիներին ուղեկցող փաստաթղթերին առնչվող հարցեր: Առաջարկվել է առավել հետեւողական լինել մարզում սպանդանոցային մորթի կազմակերպման հարցում: Ներկայումս Տավուշի մարզում անասունների մեծ մասի մորթը սպանդանոցներում չի կատարվում:

ՈՍԿԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ
Տավուշ

ՆՎԻՐԱԲԵՐԵԼ Է

ԼՐԱՑՈՒՑԻՉ ԽԹԱՆ՝ ՀՀ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ

Ամուլսարի հանքավայրը շահագործող «Լիդիան Արմենիա» փակ բաժնետիրական ընկերությունը Հայաստանի կառավարությանն է նվիրաբերել իր բաժնետոմսերի 12,5 տոկոսը: Ինչպես տեղեկացնում է «Արմենպրես»-ը, կառավարության հունվարի 18-ի նիստում համաղասախան նախագիծը ներկայացրեց էկոնոմիկայի նախարարի տեղակալ Անի Իսպիրյանը:

Նա հիշեցրեց, որ 2023 թվականին կառավարության, Եվրասիական զարգացման բանկի եւ «Լիդիան Արմենիա» փակ բաժնետիրական ընկերության միջեւ կնքվել է փոխըմբռնման հուշագիր: Հուշագրով նախատեսված է դիտարկել Ամուլսարի հանքավայրի նախապատրաստական, շինարարական եւ հետագա շահագործման աշխատանքների շարունակման հնարավորությունը:

«Ծրագրի արդյունավետ իրագործման համար «Լիդիան Արմենիա» ընկերությունը պարտավորվել է ապահովել առնվազն 250 միլիոն դոլարի չափով ներդրումներ: Շինարարության ընթացքում «Լիդիան Արմենիա» ընկերությունը պարտավորվել է վճարվող բնապահպանական հարկից ազդակիր համայնքներին բնապահպանական ծրագրերի իրականացման համար մասհանումներից բացի տրամադրել նաեւ 7 միլիոն դոլարի չափով տարեկան ֆինանսական աջակցություն յուրաքանչյուր 12-ամսյա ժամանակահատվածի համար:

Հուշագրի շրջանակներում ընկերությունը պարտավորվել է նաեւ կառավարությանը նվիրատվությամբ տրամադրել «Լիդիան Արմենիա» ընկերության կանոնադրական կապիտալի 12,5 տոկոս բաժնետոմսերը:

Նախագծով առաջարկվում է ընդունել հուշագրից բխող բաժնետոմսերի նվիրատվությունը»,- ասաց Իսպիրյանը:

Միաժամանակ, նախագծով նախատեսվում է բաժնետոմսերի կառավարման լիազորությունը վերապահել էկոնոմիկայի նախարարությանը, եւ նշյալ նվիրատվությունն ընդունելու համար էկոնոմիկայի նախարարությունը կկնքի համապատասխան պայմանագիր:

Հայաստանի վարչապետ Նիկոլ Փաշինյանը նշել է, որ Ամուլսարի հանքի հետ կապված բոլոր հարցերի պատասխանները կառավարությունը ստացել է եւ հնարավոր է համարել այն շահագործել:

«Վերջին վեց տարում անընդհատ առնչվել ենք Ամուլսարի հանքի հետ կապված խնդիրներին: Եվ, իհարկե, եղել են բազմաթիվ մտահոգություններ, եւ կառավարությունը հետեւողական է եղել այդ բոլոր մտահոգությունների հետեւից գնալու, հարցերի պատասխանները ստանալու առումով: Այն ժամանակ, երբ այդ բոլոր հարցերի պատասխանները ստացանք, հնարավոր ենք համարել նախագծի շարունակումը: Նաեւ շատ ողջունելի է, որ ներդրողները, մեկ օրինակի հետեւելով, ցանկացել են, որ ժողովուրդը՝ի դեմս կառավարության, մասնակցություն ունենա եւ բաժնեմաս ունենա այդ նախագծի մեջ: Եվ տվյալ դեպքում 12,5 տոկոսը պետք է անցնի Հայաստանի կառավարությանը, այսինքն՝ Հայաստանի Հանրապետության ժողովրդին:

Բացի օրենսդրությամբ սահմանված վճարումներից, ամեն ազդակիր համայնքի կվճարվի տարեկան 7 միլիոն դոլար: Տվյալ դեպքում Ազդակիր համայնքներն են Ջերմուկ համայնքը, Սիսիան խոշորացված համայնքը եւ Վայք համայնքը»,- ընդգծեց վարչապետը:

Փաշինյանի խոսքով՝ Ամուլսարի հանքի շահագործումն այս մոդելով բազմաթիվ մտահոգությունները փարատում է, նաեւ լրացուցիչ խթան կլինի Հայաստանի տնտեսական աճի եւ տնտեսական զարգացման համար:

«Մենք հույս ունենք, որ Ամուլսարի հանքը կլինի հանքաարդյունաբերության ոլորտում նոր ստանդարտների ներդման հարթակ: Եվ, իհարկե, կառավարությունը արդեն որպես բաժնետեր այս հարցում կլինի հետեւողական»,- եզրափակեց վարչապետը:

Ամուլսարի ոսկու հանքավայրի շահագործման աշխատանքները դադարեցվել էին դեռեւս 2018 թվականից, երբ հանքի շահագործման դեմ պայքարող բնապահպաններն ու հանքավայրի հարակից համայնքների որոշ բնակիչներ արգելափակել էին դեպի հանքավայր տանող բոլոր ճանապարհները: Կառավարությունը հանքի շահագործման բնապահպանական ռիսկերն ու օրինականությունը գնահատելու հարցով միջազգային փորձաքննություն էր պատվիրել, նաեւ հանքի շահագործման հետ կապված քրեական գործ էր հարուցվել, որը հետագայում կարճվեց՝ նաեւ հիմնվելով միջազգային փորձաքննության արդյունքների վրա:

«ԿՈՆՎԵՐՍ ԲԱՆԿԸ» Գ

ՎԱՂԱԺԱՄԿԵՏ ԱՎԱՐՏԻ ՄԱՍԻՆ

«Կոնվերս բանկը» հայտարարում է «Եվրոթերմ» ՓԲԸ կորպորատիվ պարտատոմսերի տեղաբաշխման վաղաժամկետ ավարտի մասին: 28.11.2023-12.01.2024-ն ընկած ժամանակահատվածում տեղաբաշխվել է 500 մլն ՀՀ դրամ ընդհանուր ծավալով պարտատոմս՝ 12,5% արժեկտրոնային եկամտաբերությամբ եւ 36 ամիս ժամկետով:

«Կոնվերս բանկի» Ներդրումային դեպարտամենտի տնօրեն Գրիգորի Զաքարյանն ասում է. «Գործընկեր «Եվրոթերմ»-ի պարտատոմսերի տեղաբաշխումը նոր հաջողված փորձառություն է «Կոնվերս բանկի» համար: Տեղաբաշխման վաղաժամկետ ավարտը վկայում է պարտքային արժեթղթերի մասով ՀՀ ֆինանսական շուկայում նկատվող պահանջարկի, ինչպես նաեւ Եվրոթերմ/Նոյան ապրանքանիշերի նկատմամբ վստահության մասին:

Բանկը նպատակ ունի այսուհետ եւս իրականացնել տնտեսության իրական հատվածի ընկերությունների պարտատոմսերի թողարկում եւ տեղաբաշխում՝ հաճախորդների համար ստեղծելով տարբեր ոլորտների ընկերությունների արժեթղթերում ներդրումների, իսկ թողարկող ընկերությունների համար՝ ֆինանսների ներգրավման նոր հնարավորություններ: «Կոնվերս բանկը» բաց եւ պատրաստակամ է այս ծառայությունները մատուցել այն ընկերություններին, որոնք ցանկանում են հայտնվել ֆինանսական շուկաներում, օգտվել դրանց հնարավորություններից եւ դիվերսիֆիկացնել պասիվների կառուցվածքը: Ընդ որում՝ թողարկման ողջ գործընթացը՝ փաստաթղթերի հավաքագրմանը աջակցությունից մինչեւ տեղաբաշխման ավարտ, կկազմակերպվի «Կոնվերս բանկի» կողմից, այդ թվում՝ թվային նոր տեխնոլոգիաների կիրառմամբ»:

Հայտարարված ձեռքբերման ցածր շեմի (նվազագույնը տասը հատ պարտատոմս՝ յուրաքանչյուրը 10,000 ՀՀ դրամ անվանական արժեքով) շնորհիվ դրանք հասանելի են դարձել ավելի քան 150 ներդրողի: Converse Mobile հավելվածի պարզ օգտագործումն էլ ավելի է հեշտացրել ներդրման գործընթացը: Ընդհանուր առմամբ, պարտատոմսերի ավելի քան 70%-ը տեղաբաշխվել է հավելվածի միջոցով:

Պարտատոմսերը ցուցակման կներկայացվեն Հայաստանի ֆոնդային բորսա երկրորդային շուկայում շրջանառելու համար: Որպես պարտատոմսերի շուկա ստեղծող հանդես կգա «Կոնվերս բանկը»:

Բանկը վերահսկվում է ՀՀ կենտրոնական բանկի կողմից:

● Անցած 1 օրվա ընթացքում հանրապետությունում արձանագրվել է ճանապարհատրանսպորտային 10 պատահար. 15 մարդ ստացել է տարբեր աստիճանի մարմնական վնասվածքներ:

ՍՈՑԻԱԼԱԿԱՆ

ԽԱՂԱՄՈԼՈՒԹՅՈՒՆ

ՊԵՏՔ Է ԱՃԽԱՏԵՆ ԳԵՐԱՏԵՍՉՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Ազգային ժողովի «Քաղաքացիական պայմանագիր» խմբակցության պատգամավորներ Արթուր Հովհաննիսյանն ու Արուսյակ Ջուլհակյանն անդրադարձել են զինված ուժերում զինծառայողների կողմից խաղադրույքներ կատարելն օրենքով արգելելու հնարավորությանը:

Զինված ուժերում խաղադրույքների կատարումն օրենքով արգելելու մասին հունվարի 17-ին խոսել էր ՀՀ վարչապետը՝ նշելով, որ առաջիկայում համապատասխան նախաձեռնությամբ հանդես կգան:

Խորհրդարանական ճեպազրույցների շրջանակներում լրագրողների հետ հանդիպմանը «Քաղաքացիական պայմանագիր» խմբակցության քարտուղար Արթուր Հովհաննիսյանը, անդրադառնալով թեմային, ընդգծեց, որ խաղամոլությունը ոչ միայն զինված ուժերի, այլ ընդհանրապես Հայաստանի քաղաքացիների համար չարիք է դարձել:

«Շատերն իրենց ընտանեկան, անձնական, աշխատանքային երջանկությունը կորցնում են՝ ընկնելով խաղամոլության ճիրանները: Հայաստանի տնտեսության մեջ էլ բուքմեյքերական կազմակերպությունների չափաբաժինը եթե նայենք, կհասկանանք, թե ինչ խնդրի հետ գործ ունենք, բայց նաեւ դուք էլ եք նկատում, որ մեր քաղաքական թիմի համար խաղամոլության դեմ պայքարն առաջնահերթություն է: Այս մասով մենք բազմաթիվ օրենսդրական նախաձեռնություններ ենք հեղինակել»,-նշեց պատգամավորը՝ հավելելով, որ խաղամոլության դեմ պայքարի որոշակի մեխանիզմներ մշակելու համար առանձնահատուկ քննարկումներ են տեղի ունեցել ոչ միայն բանակի հետ, այլեւ բոլոր ուժային կառույցներում:

Պատգամավորի խոսքով՝ տեխնիկական լուծումներ առկա են, որոնցից պետք է գտնել արդյունավետը. դա պետք է նաեւ պաշտպանական գերատեսչության հետ քննարկվի, քանի որ նախարարությունն ավելի լավ է տեղյակ խնդիրներին, որոնք գոյություն ունեն բանակում:

ՔՊ խմբակցության պատգամավոր Արուսյակ Ջուլհակյանն էլ հավաստեց, որ այս փուլում արդեն արձանագրված է, որ դա խնդիր է ինչպես հանրության շրջանում, այնպես էլ զինված ուժերում, ինչը երբեմն հանգեցնում է ողբերգական հետեւանքների:

Պատգամավորի կարծիքով՝ այս խնդրի բալանսավորված լուծման մեխանիզմների շուրջ պետք է աշխատեն գերատեսչությունները:

«Խնդիրը պետք է համակողմանի ուսումնասիրել եւ տարբեր գերատեսչությունների տեսանկյունից նայել դրան՝ հասկանալու համար, թե ինչ օպտիմալ լուծում կարող ենք գտնել»,-համոզմունք հայտնեց Ջուլհակյանը՝ տեղեկացնելով, որ այս ուղղությամբ քննարկումներ արդեն սկսվել են, եւ բալանսավորված ու ճիշտ լուծումների առկայության դեպքում կոնկրետ քայլեր կձեռնարկվեն:

«ՏՈՍՊԱ»

ՀԱՏՈՒԿ ՈՒՇԱԴՐՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆՈՒՄ ԿՊԱՀԻ

Ռադիո Sputnik ընկերության գլխավոր խմբագիր Կիրիլ Վիշինսկին ափսոսանք է հայտնել, որ 2023-ի սեպտեմբեր-նոյեմբեր ամիսներին «Սպուտնիկ Արմենիա» ռադիոընկերության եթերում «հնչել են արմատական կտրուկ արտահայտություններ, որոնք ակնհայտորեն հակասում են Ռադիո Sputnik-ի խմբագրական քաղաքականությանը»:

Այս մասին հայտնում են Հայաստանի Հանրապետության հեռուստաընկերության եւ ռադիոյի հանձնաժողովի մամուլի ծառայությունից՝ ընդգծելով, որ Ռադիո Sputnik-ի խմբագրի նամակի առիթը ՀՌՀ-ի՝ 2023-ի դեկտեմբերի 20-ի որոշումն էր, որով հանձնաժողովը վարչական վարույթներ հարուցեց եւ 30 օրով կասեցրեց Երեւանում «Սպուտնիկ Արմենիա»-ի 106.0 հաճախականությամբ վերահեռարձակվող «Տոսպա» ընկերության լիցենզիան:

ՀՌՀ-ի որոշման հիմքում «Ուրբաթը Տիգրան Քեոսայանի հետ» հաղորդման բովանդակությունն էր, որտեղ, ըստ ՀՌՀ եզրակացության, օտարերկրացի հեղինակը թույլ է տվել Հայաստանի Հանրապետության, նրա քաղաքացիների ու ղեկավարության պատիվն ու արժանապատվությունը նվաստացնող եւ հեգնող արտահայտություններ, հրահրել է թշնամանք, հանդես եկել բռնություն պարունակող կոչերով ու խախտել մատուցվող լսողական ծառայությունների էթիկական նորմերը:

Մեկ այլ որոշմամբ՝ հեռուստատեսության եւ ռադիոյի հանձնաժողովը «Տոսպա» ընկերությանը տուգանել է 500 հազար դրամով՝ հիմք ընդունելով «Աբովյան Թայմ» հաղորդման ժամանակ հնչեցված բովանդակությունը: Այստեղ հանձնաժողովը տեսել է պնդումներ, որոնք խուճապ են տարածում, հիմնված չեն ստուգված եւ հավաստի աղբյուրների վրա:

Ռադիո Sputnik-ի գլխավոր խմբագիրն իր հայտարարությունում ասել է, որ իրենց առաքելությունն է արտասահմանյան լսարանին ներկայացնել Ռուսաստանի՝ «որպես ուժեղ եւ բարեկամ պետության արդար կերպարը, որն ունի բարի մտադրություններ»: Նրա կարծիքով՝ դա հատկապես կարեւոր է ՌԴ-ում ապրող հայերի համար, «որոնց համար Հայաստանը փոքր հայրենիք է, իսկ նրա մեդիա տարածքը՝ ամենօրյա հետաքրքրության առարկա»:

Հայաստանի Հանրապետության տարածքում ռուսաստանյան այդ մեդիան հեռարձակելու լիցենզիա ստացած «Տոսպա» ռադիոընկերությունը նույնպես հանդես է եկել հայտարարությամբ՝ վստահեցնելով, որ ձեռնարկել է քայլեր վարչական վարույթներում նշված խնդիրներն անմիջապես շտկելու համար: Օրինակ՝ «Ուրբաթ Տիգրան Քեոսոյանի հետ» եւ «Աբովյան թայմ» հաղորդումներն այլեւս եթերում չեն լինի:

«Տոսպա» ռադիոընկերության խմբագրությունը չի կիսում եւ դատապարտում է «Ուրբաթը՝ Տիգրան Քեոսայանի հետ» հաղորդման շրջանակներում հեղինակի կողմից արված վիրավորական բնույթի արտահայտությունները եւ ափսոսում է ՀՌՀ կողմից նման խիստ որոշումների համար»,- ասված է հայտարարությունում:

Ռադիո Sputnik-ի գլխավոր խմբագիրը վստահություն է հայտնել, որ «նյարդայնացնող այն տհաճությունը», որն առաջացել էր եթերում հնչած արմատական արտահայտությունների պատճառով, կսպառվի:

Հեռուստատեսության եւ ռադիոյի հանձնաժողովը վստահեցնում է, որ հատուկ ուշադրության կենտրոնում կպահի այլ պետությունների պատրաստած եւ ՀՀ ինքնիշխան տարածքում վերահեռարձակվող տեսալսողական մեդիա արտադրանքի բովանդակությունը:

ՀՌՀ-ն հեռարձակողների ազատությունն ու անկախությունը երաշխավորող կառույց է, որն ուղղորդվում է բացառապես Հայաստանի ազգային շահերով եւ ժողովրդավարության սկզբունքներով ու նպատակ ունի ոչ թե տհաճ միջադեպեր ստեղծել, այլ պաշտպանել անաչառ, բազմազան, ոչ կողմնակալ ու զերծ քարոզչական ուղղվածությունից մեդիա բովանդակության ներկայությունը մեր տեղեկատվական տիրույթում:

ՀՀ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԹԱՆԳԱՐԱՆ

«ՄԵՆՔ ՆԱԽԸՆՏՐԵՑԻՆՔ ԱՅԼ ՃԱՆԱՊԱՐՀ»

Հայաստանի ազգության թանգարանի համար 2023 թվականը եղել է բավական հագեցած, արդյունավետ տարի: Նախորդ տարի թանգարանը կարողացել է տարբեր ձեւաչափերով Հայաստանի եւ արտերկրի հեղինակավոր թանգարաններում իրականացնել շուրջ երեք տասնյակ մշտական եւ ժամանակավոր ցուցադրություն, այդ թվում՝ առցանց տարբերակով, երկու միջազգային գիտաժողով եւ հինգ տասնյակից ավելի տարաբնույթ մշակութային միջոցառում: Տարվա կտրվածքով թանգարանի այցելությունների թիվը կազմել է 78 000: Հայաստանի ազգության թանգարանի տնօրեն Դավիթ Պողոսյանը նշեց, որ այս բոլոր աշխատանքները կատարվել են թանգարանում իրականացվող արդիականացման աշխատանքներին զուգահեռ:

«Նման ծավալի արդիականացման աշխատանքների պարագայում շատ հաճախ թանգարանները փակվում են, եւ մինչեւ վերանորոգումն ամբողջությամբ չավարտվի, չեն բացվում: Մենք նախընտրեցինք այլ ճանապարհ ու, արդիականացման աշխատանքներին զուգահեռ, շարունակեցինք մեր գործունեությունը, ծրագրերը ու լավ արդյունքներ գրանցեցինք»,-ասաց Դավիթ Պողոսյանը:

Տարին նշանակալի էր նաեւ թանգարանի հավաքածուի համալրման առումով: 2023 թվականին թանգարանը ձեռք է բերել 2700 ցուցանմուշ, ու արդեն թանգարանի հավաքածուն գերազանցել է գրանցված ցուցանմուշների 400 000 շեմը: Ձեռք են բերվել հնագիտական, ազգագրական նյութեր, հնատիպ գրքեր, դրամագիտական արժեքավոր նյութեր եւ այլն:

«Բավական հետաքրքիր հավաքածուներ են ներկայացված թանգարանում, հատկապես՝ դրամագիտական առումով: 2023-ին առաջին անգամ մեծ ծավալի դրամագիտական ցուցահանդես ունեցանք: Ունենք դրամի հավաքածու հելլենիստական, կիլիկյան շրջանից: Կուզենայի առանձնացնել նաեւ բյուզանդական շրջանի դրամների մի ամբողջական հավաքածու, որը շատ կարեւոր ձեռքբերում է»,-ասաց Դավիթ Պողոսյանը:

Թանգարանի ցուցանմուշների թիվն ավելանում է, հավաքածուները համալրվում են, սակայն դրանց պահպանության առումով դժվարություններ կան: Դավիթ Պողոսյանը նշեց, որ պահպանության համար շատ կարեւոր է լայնարձակ, անհրաժեշտ սարքավորումներով, վերականգնման լաբորատորիաներով զինված թանգարանային շենք ունենալը: Այդ ուղղությամբ աշխատանքներ տարվում են, մասնավորապես՝ 2023-ին ձեռք է բերվել փաստաթղթերի վերականգնման համալիր: Թանգարանն ունի գեղանկարների մի հավաքածու, որի վերականգնման առումով էլ աշխատանք է տարվում ֆրանսիացի գործընկերների հետ:

«Այժմ թանգարանում բոլորովին նոր համակարգեր են անցկացվում, որը հնարավորություն կտա ապահովել կայուն, ջերմախոնավությունն ու օդափոխությունը կարգավորվող համակարգ: Ինչպես գիտենք, տարբեր նյութեր պահպանման տարբեր պայմաններ են պահանջում, հետեւաբար այս նոր համակարգը հնարավորություն կտա ցուցանմուշների համար ապահովել համապատասխան միջավայր»,-ասաց թանգարանի տնօրենը՝ հավելելով, որ համակարգն արդեն փորձարկման փուլում է, գարնանը սպասվում է գործարկումը:

«Ժողովուրդ» օրաթերթում եւ Armlur.am կայքում գովազդ, հայտարարություն, հաշվետվություն, ծանուցում տեղադրելու համար զանգահարել 094-455-456 հեռախոսահամարով:

ՄՇԱԿՈՒՅԹ

ԷԹԻԿԵՏԻ ԿԱՆՈՆՆԵՐ

ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԿՅԱՆՔԻՆ ՃԻՇՏ ԻՆՏԵԳՐՎԵԼՈՎ

Վերջին տարիներին երեկոյան Երեւանում ակտիվանում է մշակութային կյանքը, այդ թվում՝ թատրոն, օպերա, բալետ եւ համերգներ: Հաճախ, սակայն, նման վայրեր ներկայանալու համար նախատեսված էթիկետի կանոնների չիմացությունը խանգարում է ներկայացման ընթացքն ու շեղում հանդիսատեսի ուշադրությունը:

ArmLur.am-ը ձեզ է ներկայացնում մի քանի պարզ կանոններ, որոնց պետք է տիրապետել մշակութային միջոցառումներին ներկայանալիս:

Ներկայանալ ժամանակին

Առաջին կանոնը ներկայացմանը ճիշտ ժամանակին գալն է, ինչը ենթադրում է ներկայացումից առնվազն 15 րոպե առաջ լինել նախասրահում, որպեսզի կարողանաք այն սկսելուց 5 րոպե առաջ զբաղեցնել ձեր տեղը:

Օգտվել հանդերձարանից

Ներկայացմանը մտնելուց առաջ մի՛ մոռացեք հանել ձեր վերարկուն եւ հանձնել հանդերձարան, քանի որ սրահում այն կարող է խանգարել թե՛ ձեզ, թե՛ ձեր կողքիններին: Բացի այդ, վերարկուով դահլիճում նստելը անհարգալից վերաբերմունքի նշան է:

Ներկայացման գալ պատշաճ հագուկապով

Օպերա, թատրոն կամ համերգասրահ մտնելիս պետք է պատշաճ տեսք ունենալ: 20-րդ դարում նման միջոցառումներին ներկայանալու համար պարտադիր պայման էր համարվում երեկոյան հանդերձանքը, սակայն այսօր պարզ դասական հագուկապն է ընդունելի: Չի կարելի ներկայացման գնալ ջինսե տաբատներով, սպորտային կոշիկներով եւ հագուստով, բաց հագուկապով:

Չօգտագործել չափից շատ օծանելիք

Ներկայացումից անմիջապես առաջ մի՛ թարմացրեք օծանելիքը, քանի որ այն կարող է նեղություն պատճառելձեր կողքին նստած հանդիսատեսին:

Անջատել բջջային հեռախոսը

Ներկայացմանը մտնելուց առաջ մի՛ մոռացեք անջատել բջջային հեռախոսը դերասանների ուշադրությունը չշեղելու եւ հանդիսատեսին չխանգարելու համար:

Շարժվել դեմքով դեպի հանդիսատեսը

Երբ անցնում եք շարքերի միջով, ապա հիշե՛ք՝ պետք է շարժվել դեմքով դեպի հանդիսատեսը, այլ ոչ թե հակառակը:

Նստել միայն ձեր տեղում

Դահլիճում զբաղեցրե՛ք միայն ձեր տոմսի վրա գրված նստատեղը, որպեսզի խուսափեք անհարմար իրավիճակներից եւ ավելորդ շարժ չստեղծեք:

«Չ» անել

Ներկայացման ընթացքում չի կարելի ծխել, ուտել եւ խմել, ինչպես նաեւ չի կարելի զրուցել կամ հեռախոսով խոսել: Անհարգալից է նաեւ հեռախոսով այլ զբաղմունք փնտրելը:

Ներկայացման ընթացքում դուրս չգալ դահլիճից

Եվրոպական մի շարք երկրներում՝ դահլիճի մուտքին չհասած, փակցված են վահանակներ, որոնց վրա հստակ նշված են այն գործողությունները, որոնք պետք է անել մինչեւ ներկայացման սկիզբը. «Սանհանգույց այցելե՛ք նախքան ներկայացումը կամ ընդմիջման ընթացքում»: Սա նպատակ ունի ապահովել ներկայացման անխափան ընթացքը:

Հիշե՛ք՝ եթե ներկայացումը ձեզ դուր չի գալիս, ապա դահլիճը լքե՛ք միայն ընդմիջման ընթացքում: Այդպիսով դուք չեք խանգարի ձեր կողքին նստած մարդկանց եւ չեք անարգի ելույթ ունեցողներին:

Բարի վայելում:

ՀՈՒՐԻ ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ

ԵՐԵՎԱՆ

ՆՈՐ ՃԱՆԱՊԱՐՀ ԿԿԱՌՈՒՑՎԻ

Երեւանում նախատեսվում է կառուցել ճանապարհ, որը միմյանց կկապի Երեւան քաղաքի մի շարք վարչական շրջաններ՝ իր վրա վերցնելով տրանսպորտային մեծ հոսքեր եւ նվազեցնելով խցանումները:

Այս ճանապարհահատվածը կհանդիսանա Մոնթե Մելքոնյան փողոցի տրամաբանական շարունակությունը: Հիմնական ճանապարհի երկարությունը 1,9 կիլոմետր է. իջատեղերով եւ երկրորդային ճանապարհներով կկազմի 6,6 կիլոմետր: Ճանապարհը հիմնականում բաղկացած կլինի 6 երթեւեկելի գոտուց:

Նշեմ, որ աշխատանքները ներառելու են Իսակով պողոտայի վրա առկա ճանապարհային հանգույցի անհրաժեշտ թեւերի կառուցումը, որով կապահովվի մուտքը Նորագյուղ թաղամաս, Հրազդան գետի վրա կկառուցվի երկաթբետոնյա հեծաններով կամուրջ, Արշակունյաց պողոտայում կկառուցվի շրջանաձեւ երթեւեկության ճանապարհային հանգույց՝ թունելային անցմամբ»,- ասաց Ղալեչյանը:

Նախարարի տեղակալի խոսքով՝ ծրագիրը նախատեսված է ավարտել 2027 թվականին. այն կիրականացվի Երեւանի քաղաքապետարանի կողմից:

Երեւանի քաղաքապետ Տիգրան Ավինյանն էլ ընդգծել է, որ Իսակով-Արշակունյաց ճանապարհի կառուցումը բավականին երկար ժամանակ քննարկված, բոլոր ուսումնասիրությունները անցած նախագիծ է, որը էականորեն կբեռնաթափի ավտոճանապարհային երթեւեկությունը տվյալ հատվածում: Մասնավորապես՝ Հաղթանակի կամուրջը որոշակիորեն կբեռնաթափվի եւ Մոնթե Մելքոնյան ճանապարհը ուղիղ կկապվի Արշակունյաց պողոտայի հետ:

«Ուզում եմ շեշտել, որ այս ճանապարհի կառուցումը շատ կարեւոր է մեկ այլ՝ ավելի մեծ նախագծի տեսանկյունից: Դա Նորագյուղի եւ հարակից տարածքների նոր թաղամասի կառուցման նախագիծն է, որի վերաբերյալ արդեն մի քանի օտարերկրյա հայտնի ճարտարապետների հետ քննարկումներ ենք իրականացնում եւ նախագծի նախապատրաստման աշխատանքն ենք իրականացնում»,- ասաց Երեւանի քաղաքապետը:

«Վստահաբար, ճանապարհի կառուցմանը զուգահեռ ունենալու ենք հայեցակարգ Նորագյուղ թաղամասի կառուցման, որը կներկայացնենք եւ՛ կառավարությանը, եւ՛ հանրությանը»,- եզրափակեց Ավինյանը:

ՄԱՐԶԱԿԱՆ

ՀԵՌԱՆՈՒՄ Է

Հայաստանի հավաքականի պաշտպան Կամո Հովհաննիսյանը հայտնել է ղազախական «Աստանա»-ից հեռանալու մասին:

«Շնորհակալություն «Աստանա»-ին երկու տարի անցկացնելու համար: Հպարտ ու երջանիկ եմ, որ ներկայացրել եմ այս ակումբը: Շնորհակալ եմ խաղընկերներիս, մարզիչներին ու բժշկական անձնակազմին: Շնորհակալ եմ չեմպիոնության ու եվրագավաթների համար: Մաղթում եմ հաջողություններ ու հաղթանակներ: Կհանդիպենք կանաչ դաշտերում»,- «Ինստագրամի» իր էջում գրել է Հովհաննիսյանը:

Նա «Աստանային» միացել էր 2022 թվականին եւ անցկացրել 42 հանդիպում: Դեռեւս չի նշվում, թե 31-ամյա ֆուտբոլիստը որտեղ կշարունակի կարիերան:

ՄԵԾ ՆԵՐՈՒԺ ՈՒՆԻ

Հունգարական «Ֆերենցվարոշի» մարզական տնօրեն Տամաշ Հայնալը խոսել է Էդգար Սեւիկյանի մասին, որը երեկ համալրել է իրենց թիմի շարքերը:

«Մենք շատ ուրախ ենք, որ նման լավ ֆուտբոլիստ ենք ձեռք բերել ու կարողացել ենք Էդգարին համոզել միանալ մեր նախագծին: Նա համապատասխանում է մեզ, մեծ ներուժ ունի եւ կարող է աճել ու զարգանալ: Դրա համար արեցինք ամեն բան, որպեսզի լինի մեր թիմի կազմում»,-Հայնալի խոսքերը մեջբերում է sport-express.ru-ն:

Նա նշել է, որ Սեւիկյանն ուրախ ու մոտիվացված է, ակումբի հետ հաջողությունների հասնելու մեծ ցանկություններ ունի. «Չեմ կարծում, որ «Ֆերենսվարոշը» նրա համար պետք է ցատկահարթակ լինի դեպի այլ ակումբ, նման տարբերակ չենք քննարկել: Մեզ համար կարեւոր է, որ ֆուտբոլիստները ցանկանան նվաճումների հասնել մեր ակումբի հետ»:

ՀԱՎԱՔԱԿԱՆԻ ԿԱԶՄԸ

Փետրվարի 12-20-ը Սոֆիայում կայանալու է ծանրամարտի Եվրոպայի առաջնությունը, որը վերջին կարեւոր ստուգատեսն է լինելու ամռանը կայանալիք օլիմպիական խաղերից առաջ:

Ծանրամարտի եվրոպական ֆեդերացիան ներկայացրել է հավաքականների ընդլայնված կազմերը:

Հայաստանի տղամարդկանց ընտրանու գլխավոր մարզիչ Փաշիկ Ալավերդյանը հայտավորել է հետեւյալ ծանրոդներին՝ Գոռ Սահակյան (67 կգ), Ռաֆիկ Հարությունյան (81 կգ), Անդրանիկ Կարապետյան (89 կգ), Դավիթ Հովհաննիսյան, Հակոբ Մկրտչյան (96 կգ), Գարիկ Կարապետյան, Սամվել Գասպարյան (102 կգ), Պետրոս Պետրոսյան (109 կգ), Վարազդատ Լալայան, Սիմոն Մարտիրոսյան (+109 կգ): Պահեստայինների թվում են Գառնիկ Չոլակյանն (61 կգ) ու Արա Աղանյանը (96 կգ):

Արտաշես Ներսիսյանի գլխավորությամբ հանդես կգան Ալեքսանդրա Գրիգորյանը, Իզաբելլա Յայլյանը (55 կգ), Տաթեւ Հակոբյանը, Լիանա Գյուրջյանը (81 կգ) եւ Հռիփսիմե Խուրշուդյանը (87 կգ):

● Հունվարի 19-ին Սոս Սարգսյանի անվան համազգային թատրոնում տեղի կունենա «Փափլիկը» ներկայացումը: Տոմսերի արժեքը՝2500-3500 դրամ: Սկիզբը՝ժամը 19:00-ին:

ԵՂԵ՛Ք ՏԵՂԵԿԱՑՎԱԾ

Էջը՝ ՄԱՐԻԱՄ ԴԱՆԻԵԼՅԱՆԻ

ԻՐԱՎՈՒՆՔ

ՀԱՐՑ. Ես ուզում եմ իմանալ՝ ծառայողական քննության կողմերն ինչպիսի իրավունքներ ունեն:

Մերի Սարգսյան (41 տարեկան)

ՊԱՏԱՍԽԱՆ. Տեղեկացնում ենք, որ ծառայողական քննության կողմն իրավունք ունի ծառայողական քննություն անցկացնելու կարգով սահմանված դեպքերում եւ ընթացակարգով՝

ա) ներկայացնել ծառայողական քննություն անցկացնելու դիմում,

բ) ծառայողական քննություն սկսելու պահից ստանալ ծառայողական քննություն անցկացնելու կարգով սահմանված իր իրավունքների եւ պարտականությունների մասին գրավոր ծանուցում,

գ) ստանալ ծառայողական քննության անցկացման կապակցությամբ խորհրդի որոշումների պատճենները, որոնք կարող են բողոքարկվել դատական կարգով,

դ) ծառայողական քննության ցանկացած փուլում միջնորդություններ ներկայացնել՝ առանձին գործողություններ կատարելու, ինչպես նաեւ ծառայողական քննության նյութերին իր դիմումը հիմնավորող, ծառայողական քննություն անցկացնելու կարգով նախատեսված փաստական տվյալներ կցելու եւ դրանց ընթացք տալու վերաբերյալ,

ե) ծառայողական քննության ցանկացած փուլում, գրավոր դիմում ներկայացնելով, հետ վերցնել ծառայողական քննություն անցկացնելու մասին իր դիմումը,

զ) տալ բացատրություններ,

է) ծանոթանալ իր մասնակցությամբ կատարված գործողությունների ընթացքի, բովանդակության, արդյունքների վերաբերյալ կազմված տեղեկանքներին կամ արձանագրություններին եւ դրանց կապակցությամբ դիտողություններ ներկայացնել, որոնք հաշվի չառնելը բողոքարկման ենթակա չէ,

ը) ծառայողական քննությունն ավարտվելուց հետո ծանոթանալ քննության նյութերին, քննությունը լրացնելու կապակցությամբ ներկայացնել միջնորդություններ:

ՀՀ քաղաքացիական ծառայության խորհուրդ

«ԺՈՂՈՎՈՒՐԴ». Ավելացնենք, որ ծառայողական քննության ընթացքում ծառայողական քննության կողմերն ունեն նաեւ իրավական այլ իրավունքներ, ինչպես նաեւ ծառայողական քննություն անցկացնելու կարգով իրենց վերապահված այլ իրավունքներ:

ԿԱՐԳ

ՀԱՐՑ. Խնդրում եմ ասել՝ ապաստան հայցողների համար նախատեսված հատուկ կացարանը ինչ է իրենից ներկայացնում:

Հասմիկ Հայրապետյան (60 տարեկան, տնային տնտեսուհի)

ՊԱՏԱՍԽԱՆ. Գ. Հայրապետյանի հարցին ի պատասխան՝ տեղեկացնում ենք, որ ՀՀ միգրացիոն պետական ծառայության ենթակայությամբ գործում է հատուկ կացարան, որը նախատեսված է Հայաստանում ապաստան հայցող անձանց եւ նրանց ընտանիքի անդամներին տեղավորելու համար:

Հատուկ կացարանում բնակվող անձանց տեղաշարժի ազատությունը չի սահմանափակվում: Նրանք կարող են բնակվել կացարանում մինչեւ իրենց ապաստանի դիմումի վերջնական որոշում կայացվելը՝ ներառյալ մերժման որոշման դատական կարգով բողոքարկման ավարտը: Հատուկ կացարանում բնակության ողջ ընթացքում նրանց տրամադրվում է սնունդ, սպիտակեղեն, անձնական հիգիենայի պարագաներ:

Հայաստանի Հանրապետության միգրացիոն պետական ծառայություն

«ԺՈՂՈՎՈՒՐԴ». Նշենք, որ դիմողի ապաստանի դիմումը վերջնական մերժվելուց հետո նա կարող է կրկին դիմում ներկայացնել ՄՊԾ Հայաստանում ապաստան ստանալու համար, եթե ի հայտ են եկել նոր իրադարձություններ եւ փաստեր:

ԼՈՒՌ ԿԱԴՐ

Լուսանկարը՝ համացանցից

Այս «կրեատիվ» դույլ-աղբամանը Դիլիջան համայնքի ՔՊ-ական ղեկավար Դավիթ Սարգսյանի մտքի արգասիքն է:

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Մեր թերթը Բաժանորդագրվելու համար կարող եք դիմել

2011
Ժողովուրդ 1
www.armlur.am

«Հայմամուլ» ՓԲԸ
հեռ. 45-82-00, 45-19-11

«Հայփոստ» ՊՓԲԸ
հեռ. 51-45-46, 51-45-47

«Բլից-Մեդիա» ՍՊԸ
հեռ 52-5301

Առաքումը՝ ԱՆՎՃԱՐ:

Ձեզ հետաքրքրող ցանկացած հարցով կարող եք դիմել «Ժողովուրդ» օրաթերթի խմբագրություն (**010 54-64-23** հեռախոսահամարով), եւ մենք անպայման կանդրադառնանք ձեր բարձրացրած բոլոր խնդիրներին:

ԱՌԱՋԱՐԿ
հայկական տպագիր մամուլից

«Ժողովուրդ» օրաթերթին բաժանորդագրվելու համար կարող եք լրացնել հետեւյալ բլանկը եւ ուղարկել նշված հասցեով: Ամեն օր թերթը կհասնի ձեր նախընտրելի վայր:

Բաժանորդագրության բլանկ

Անուն՝ ____________
Ազգանուն՝ ____________
Առաքման հասցե՝ ____________
Բջջային եւ/կամ քաղաքային հեռախոս՝ ____________

Հեռ.՝(060) 490049
0023, Արշակունյաց 2, 5-րդ հարկ, 518ս.

ԵՂԱՆԱԿԻ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ

	Շիրակ	- 4 - 7 0 + 5		Արարատ	0 + 2 + 9 + 12
	Կոտայքի լեռներ	- 3 - 6 - 1 + 5		Արմավիր	- 1 - 3 + 7 + 9
	Կոտայքի նախալեռներ	0 + 3 + 6 + 8		Վայոց ձորի լեռներ	- 6 - 9 - 1 + 4
	Գեղարքունիք	- 3 - 5 -1 + 5		Վայոց ձորի նախալեռներ	- 2 - 4 + 6 + 8
	Լոռի	- 8 - 13 + 4 + 9		Սյունիքի հովիտներ	- 2 - 4 + 7 + 9
	Տավուշ	- 2 - 5 -1 + 4		Սյունիքի նախալեռներ	- 6 - 9 + 6 + 9
	Արագածոտնի լեռներ	- 0 - 3 -1 + 1		ԼՂՀ	- 4 - 8 + 2 + 5
	Արագածոտնի նախալեռներ	- 1 - 3 + 5 + 8		Երեւան	- 1 - 3 + 4 + 6

Լրատվական գործունեություն իրականացնող՝
«Ժողովուրդ թերթի խմբագրություն» ՍՊԸ
Հասցեն՝ ք. Երեւան, Աբովյան 22ա/3, հեռ՝ **010 54-64-23**
Պետական գրանցման վկայականի համարը՝ 03Ա089086
տրված է 24.11.2010
Ստորագրված է տպագրության **18.1.2024**
Հասցեն՝ Գեղարքունիքի մարզ, ք. Վարդենիս, Վ.Համբարձումյան 2/21

Գլխավոր խմբագիր՝
ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ

Տպագրված է «ԳԻՆԴ» տպարան ՍՊԸ հրատարակչությունում
Խմբագրություն հանձնված նյութերը չեն գրախոսվում եւ չեն վերադարձվում, **Գ** նշանով նյութերը գովազդային հրապարակումներ են, որոնց համար խմբագրությունը պատասխանատվություն չի կրում:

«Ժողովուրդ» օրաթերթում հրապարակված նյութերը արտատպելիս կամ ընթացիկ մեջբերումներ անելիս պետք է պարտադիր գրառել հետեւյալ նախադասությունը. *«Շարունակությունը կարող եք կարդալ «Ժողովուրդ» օրաթերթի այսօրվա համարում»:*